



# ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Զարթնի՛ր

հանուն Հայաստանի, Արցախի, Չավախքի  
Սիյունքի և **Վեր տեսակի** հարատևության

2021թ. ք.երևան



ՈՒՇ ԶԷ,

**Զարթնի՛ր**

եկ Պայքարենք

**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

«ԶԱՐԹՈՆՔ» ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ

## 01 • ՆԱԽԱԲԱՆԸ

2020 թվականը ճակատագրական ազդեցություն ունեցավ հայկական պետականությունների համար: Թուրքիայի օժանդակությամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում մեր շուրջը ձևավորվել է լրիվ այլ աշխարհաքաղաքական միջավայր: Միևնույն ժամանակ, պատերազմի հետևանքներն այնպիսի ազդեցություն են ունեցել մեր պետության կենսագործունեության ոլորտների վրա, որ Հայաստանը և Արցախը ստիպված են նորովի կառուցել պետականությունը, արմատապես փոխելով ընդհանուր պատկերացումները ապագայի մասին:

Նոր իրողությունների պայմաններում ծագող ամենակարևոր հարցադրումներն ուղղված են ապագային: Ինչպիսիքն պետք է լինի հայկական պետականությունը, որ կարողանա ոչ միայն պահպանել իր տեղը աշխարհի քաղաքական քարտեզի վրա, այլև զարգանա որպես ժամանակակից ու ամուր պետություն, որը հնարավորություն կտա իրականացնել հայ ժողովրդի իղձերն ու նպատակները: Այս հիմնարար հարցի պատասխանին հասնելու համար ոչ միայն անհրաժեշտ է տալ տեղի ունեցածի ամբողջական գնահատականը, այլև կատարել ժամանակակից հայկական պետականությունն այս աննախնամելի հանգրվանին հասցրած բոլոր պատճառների խորն անխտածանաչում:

Նոր պայմաններում կենսականորեն կարևոր է միավորել բոլոր այն ուժերը, որոնք ունակ են պատասխանատվություն ստանձնել Հայաստանի ճակատագրի համար, համախմբված ազնիվ գաղափարների և նպատակների շուրջ, որոնք մոտ են և հասկանալի երկրի քաղաքացիների ճնշող մեծամասնության համար: «**ԶԱՐԹՈՒՔ**» ազգային քրիստոնեական կուսակցությունն իր առաքելությունն է համարում բնակչությանն արթնացնել խորը թմբիրից: Պետք է ստեղծել միջավայր, ուր յուրաքանչյուր հայ (**«Հ քաղաքացի»**) կտեսնի իր վաղվա հզոր պետությունը և իր երեխաների լուսավոր ապագան:

Ազգի արթնացման գրավականն ազգային հարուստ արժեքներն են, պատմությունը և քրիստոնեական արժեքները: Բարոյականությունը, ազգային արժեհամակարգերի պահպանումն ու քրիստոնեական արժեքները կմիավորեն և կգոտեպնդեն յուրաքանչյուր հայի, կստիպեն սթափվել և առաջ գնալ ավելի ուժեղ, ավելի հաստատական և ավելի մաքուր:

## ՈՒՇ ԶԷ ...

Հայտնի և անհայտ ուժերի կողմից թիրախավորվել են մեր **4** հիմնասյուները (ընտանիք, եկեղեցի, բանակ և պետականություն)

- Փորձեցին թուլացնել հայ ընտանիքը, խարխլել նրա ավանդական հիմքերը տարաբնույթ օրենքների, կոնվենցիաների և ծրագրերի միջոցով, **սակայն հայ ընտանիքն ավելի ամուր գտնվեց, քան հակառակորդի ծրագրերը.**
- Փորձեցին թուլացնել Լուսավորչահաստատ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, **սակայն Քրիստոսն է եկեղեցու Վեմը, ով որ այս Վեմի վրա ընկնի, կփշրվի. և ում վրա այն ընկնի, նրան կճգմի (Մատթեոս 21:44).**
- Փորձեցին պատերազմի միջոցով խլել մեր եղբայրների կյանքը, ոչնչացնել մի ամբողջ մատաղ ու քաջարի սերունդ, այրել հայ ազգի կենաց ծառը, **սակայն հայ ազգը կարող է մոխրից էլ վեր հառնել.**
- Փորձեցին ոչնչացնել պետական ինստիտուտները, քայքայել երկրի տնտեսությունը, թուլացրեցին ազգի պայքարելու դիմադրողականությունը, պետության դարպասները (սահմանները) բացեցին թշնամու առջև, պետականությունը դրեցին վտանգի տակ, **սակայն հայ ազգն ունի պատմական հիշողություն, որը պետք է արթնացնել:**

## ԶԱՐԹՆԻՐ...

Մեր ներկան և ապագան պետք է կառուցենք բարոյական **4** առաքինությունների վրա՝ **խոհեմության, չափավորության, արդարության և արիության:**

- **ԽՈՒՇԵՄՈՒԹՅԱՐՔ՝** իրադարձությունները վերլուծելու և իրավիճակը ճիշտ գնահատելու միջոցով, գիտակցում ենք, որ դարեր շարունակ թշնամին չի խնայել մեր ազգին, մշտապես փորձել է ոչնչացնել մեզ, այս պահին էլ չի թաքցնում Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի, Գեղարքունիքի մարզերի և նույնիսկ Երևանի նկատմամբ պահանջատիրական ցանկությունները.

- **ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ** (զսպվածությամբ) ղեկավարվելով՝ մեր կրքերը և ցանկությունները միմյանց դեմ ուղղելու փոխարեն, ի վիճակի կլինենք ազգի ներսում պառակտումը վերացնելու և համախմբվելու.
- **ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ** գործելու դեպքում՝ կվերականգնենք վստահությունը պետական ծառայողի խոսքի նկատմամբ, սահմանին միայնակ չենք թողնի զինվորին, քաղաքական դաշտից կեղծ օրակարգերը դուրս կմղենք, կզարգացնենք տնտեսությունը և կվերականգնենք վստահությունը միմյանց հանդեպ.
- **ԱՐԻՈՒԹՅԱՄԲ** գործելու դեպքում՝ կցուցաբերենք նախաձեռնողականություն ընտանիքի, եկեղեցու, բանակի և պետականության պաշտպանության հարցում: Չենք վախենա մեր սեփական սահմանը պաշտպանելուց և սահմանախախտներին պատժելուց:

## ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ...

«ԶԱՐԹՈՒՔ» ազգային քրիստոնեական կուսակցության հիմնադիրները տարիներ ի վեր ակտիվ պայքար են մղել արատավոր երևույթների ու բարքերի դեմ՝ պաշտպանելով ազգային արժեքները: Մասնավորապես՝ մերժողական վերաբերմունք են ցույց տվել «Ընտանեկան բռնության մասին» օրինագծի (2017թ.), Ստամբուլյան կոնվենցիայի (2019-2020թթ.), Լանզարոտեի կոնվենցիայի (2020թ.) և այլ օրինագծերի ընդունման գործընթացների ու նախաձեռնությունների նկատմամբ: 2020թ. Արցախյան պատերազմին անմիջական մասնակցություն են ունեցել նաև «ԶԱՐԹՈՒՔ»-ի հիմնադիրները:



## ԶԱՐԹՈՒՔԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ...

Մենք կներկայացնենք ձեր շահերը Ազգային ժողովում, որպես՝ **ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆ**, փաստաբաններից, իրավապաշտպաններից և տարբեր բնագավառների մասնագետներից կազմված թիմով:

## 02 • ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



*«Եթե ուզում ես նավ կառուցել, պետք չէ մարդկանց հավաքել, ծրագրեր կազմել, գործ անել, գործիքներ բերել: Պետք է մարդկանց վարակել անծայրածիր ծովը տեսնելու ձգտումով: Այդ դեպքում նրանք իրենք կկառուցեն նավը:»*  
- Անտուան դը Սենտ Էքզյուպերի

### «ԶԱՐԹՈՒՔ» ԱՔԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ Է՝

- «վարակել» ազգին ապագայի Հայաստանի երազանքով, հավատացնել, հուսադրել և հստակ ցույց տալ այն ճանապարհը, որով պետք է անցնի հայ ազգը և այն հանգրվանը, ուր կհասնենք միասին.
- զորաշարժել համայն հայությանը ազգային մեկ ծրագրի շուրջ, որը կոչված կլինի ծառայել ընդհանուր իղձերին.
- կայացնել քրիստոնեական արժեքների և ազգային ինքնատիպության վրա հիմնված հզոր պետություն (ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական):

## 03 • ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ԶԱՐԹՈՒՔ» ազգային քրիստոնեական կուսակցությունն իր գործունեությամբ նպաստում է հետևյալ խնդիրների իրականացմանը՝

- Պետական մարմինների արդյունավետության բարձրացումը.
- Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովումը.
- Արդար և առողջ հասարակության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- Մրցունակ և կայուն տնտեսության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- Ազատ, առողջ, արժանապատիվ և հայրենասեր քաղաքացի ունենալու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

## 04 • ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԵՐԸ

«ԶԱՐԹՈՒՔ» ազգային քրիստոնեական կուսակցության պատկերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պետք է հիմնվի առնվազն 5 սյուների վրա:

### Հայաստանի Հանրապետությունը պետք է՝

- 1 • Ունենա կայուն պետական կառավարման համակարգ.
- 2 • Լինի անվտանգ և պաշտպանված.
- 3 • Ունենա արդար և առողջ հասարակություն.
- 4 • Լինի տնտեսապես զարգացած երկիր.
- 5 • Ունենա կրթված, ազնիվ և հայրենասեր քաղաքացի:

### Պետություն, որտեղ՝

- (ա) գործում է արդյունավետ կառավարման ձև՝ Ազգային ժողովի վերահսկողության արդյունավետ միջոցների առկայությամբ, հանդիսանալով քաղաքական կայունության և սահմանադրական կարգի անձեռնմխելիության երաշխիքը, (բ) Ազգային ժողովը (խորհրդարանը) երկպալատ է՝ ապահովելով պոպուլիստական քաղաքականությունների արդյունքում պետականության դեմ ոտնձգությունների նկատմամբ պետության դիմադրողականությունը, (գ) խստորեն պահպանվում է Սահմանադրությունը, (դ) ապահովվում է իրավունքի գերակայությունը, (ե) գործում են իշխանության և արդարադատության ուժեղ և պատասխանատու մարմիններ: Կոռուպցիայի դեմ իրական պայքարը, ինչպես նաև իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը ապահովելու է ժողովրդի, այդ թվում՝ քաղաքացու, բարեկեցությունը (կայուն պետական կառավարման համակարգ).

- յուրաքանչյուր մարդու համար երաշխավորված է անվտանգությունը: Պետություն, որն ունակ է իրեն և Արցախի Հանրապետությանը պաշտպանելու, որտեղ հուսալիորեն աշխատում են իրավապահ մարմինները (այդ թվում՝ անվտանգության ծառայությունը), որտեղ գործում է արդար դատարանը: Պետությունը պետք է արժևորի ռազմիկի (մարտիկի, զինվորականի) կերպարը, ինչպես նաև ապահովի ռազմիկներին (զինվորականներին) իրական սոցիալական երաշխիքներով (անվտանգ և պաշտպանված երկիր).

- կառուցվում է արդար և առողջ հասարակություն՝ հասարակության անդամների համար հավասար մեկնարկային հնարավորություններով: Պետությունը պայմաններ է ստեղծում հասարակության անդամների ձեռնարկատիրության և ստեղծագործականության համար, խթանում է արդյունավետ զբաղվածությունը, սպորտը դարձնում է հասարակության կյանքի անբաժանելի մասը, առողջապահական ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացման ճանապարհով բարելավում է բնակչության առողջական վիճակի բնութագրիչները, պայմաններ է ստեղծում ազգաբնակչության աճի համար: Պետությունը երաշխավորում է ազգային փոքրամասնությունների՝ իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը (արդար և առողջ հասարակություն):

- տնտեսական զարգացումը հիմնված է գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման, տուրիզմի, ժամանակակից տեխնոլոգիաների և բնական պաշարների արդյունավետ օգտագործման, ատոմային էներգետիկայի զարգացման, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների խրախուսման և պաշտպանության վրա: Պետությունը պետք է դառնա օրինականության և սեփականության իրավունքի իրական երաշխավոր, բոլորի համար ապահովի արդար մրցակցություն և միասնական կանոններ: Պետության ջանքերը նպատակաուղղված են լինելու օտարերկրյա ուղղակի ներդրումների աճին, միջազգային լավագույն օրինակների ու փորձառության փոխառմանը, նոր շուկաների բացահայտմանը և արտահանման ավելացմանը, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանմանը, սփյուռքի գործարար ներուժի լիարժեք ներգրավմանը: Տնտեսական քաղաքականությունը պետք է ծառայի երկարաժամկետ նպատակների իրականացմանը (տնտեսապես զարգացած երկիր):

- ծնվելու և դաստիարակվելու է կրթված, հայրենասեր և ազնիվ քաղաքացի: Պետությունը գործելու է Հայ ժողովրդի ինքնության ամրապնդման, քաղաքակրթական արժեքների և պատմամշակութային ժառանգության պաշտպանության ու հանրահռչակման ուղղությամբ: Մարդու դաստիարակությունը հիմնվելու է կրթության, գիտության, մշակույթի, հոգևոր արժեքների (քրիստոնեության) և ազգային գաղա-



վարախոսության վրա: Հայ ժողովրդի ուժը հոգևոր արժեքների, բարոյական մաքրության և արժանապատվության, սփյուռքի համախմբման, ինչպես նաև միմյանց հարգելու կարողության մեջ է: Պետությունն ապահովում է հայ ավանդական ընտանիքի՝ որպես պետության կայունության և հայկական քաղաքակրթության բջջի պաշտպանությունն ու հզորացումը: Պետությունն իրականացնելու է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ընտանիքի և մանկության, Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում հայոց լեզվի, մշակութային ժառանգության համալիր պաշտպանությունը երաշխավորող միջոցառումներ (կրթված, ազնիվ և հայրենասեր քաղաքացի):

## 05 • ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

### 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ.

Պետական մարմինների արդյունավետության բարձրացման համար պետք է հաշվի առնել մարդկային գործոնը: Մարդկային գործոնում ռիսկերը նվազեցնելու համար պետք է օրենքով հստակ սահմանել այն մարդու նկարագիրը, որը վերցնելու է իր վրա այս կամ այն ոլորտում պատասխանատվություն (օրինակ՝ բարոյական կերպար, զինվորական ծառայության անցած լինել և այլն):

#### 1.1. Օրենսդիր իշխանություն

Սահմանադրության փոփոխությունների միջոցով Ազգային ժողովն անհրաժեշտ է դարձնել երկպալատ: Առաջին կամ ստորին պալատը ձևավորվելու է ընտրությունների միջոցով՝ համամասնական (կամ համամասնական-մեծամասնական) ընտրակարգով:

Երկրորդ կամ վերին պալատը ձևավորվելու է պրոֆեսիոնալ կամ ոլորտային սկզբունքով, մասնավորապես ներգրավվելու են սփյուռքահայեր, տեղական ինքնակառավարման մարմիններից ներկայացուցիչներ, մասնագիտական միավորումներից ներկայացուցիչներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, Ազգային ժողովի ստորին պալատի, դատավորների միության կողմից նշանակվող

ներկայացուցիչներ: Ստորին պալատն ընդունելու է օրենքներ, որոնք կարող են վերադարձվել վերին պալատի կողմից: Վերադարձված օրենքները կարող են վերստին ընդունվել ավելի մեծ ձայների քանակով:

Այս կառուցակարգով՝

(1) վերին պալատի պրոֆեսիոնալիզմը նպաստելու է որակյալ օրենքների ընդունմանը, (2) ապահովվելու է պետության դիմադրողականությունը՝ պոպուլիստական եղանակներով ստորին պալատում քաղաքական մեծամասնություն ձեռք բերած ուժի կործանարար գործողություններից:

## 1.2. Դատական իշխանություն. արդարադատություն

Արդարադատության ոլորտի բարեփոխումները պետք է իրականացնել դեռևս 14-րդ դարում Գրիգոր Տաթևացու մատնանշած պատճառների վերացման ուղղությամբ: Ըստ Տաթևացու, արդար դատաստանը ծուում է չորս բան՝ **Կաշառքը • Երեսպաշտությունը • Վախը • Տգիտությունը:**

Նշված պատճառները կարելի է վերացնել, մասնավորապես՝ դատավոր դառնալու համար մասնագիտական և անձնական բարձր պահանջներ սահմանելու, դատավորի նյութական բարեկեցությունն ապահովելու, դատավորի ներքին և արտաքին անկախությունն ապահովելու դեպքում:

**Ա.** Մասնավորապես, Բարձրագույն դատական խորհրդի համամասնությունն անհրաժեշտ է փոփոխել, անդամների մեծամասնություն ընտրելու հնարավորությունն ընձեռնելով դատավորների միությանը:

**Բ.** Անհրաժեշտ է վերականգնել դատավորների անձեռնմխելիությունը նաև ոչ դատավորի լիազորությունների իրականացման առնչությամբ քրեական հետապնդման դեպքերում: Դատավորի նկատմամբ քրեական հետապնդումը, կալանավորումը կարելի է իրականացնել միայն բարձրագույն դատական խորհրդի թույլտվությամբ:

**Գ.** Անհրաժեշտ է գործունե երաշխիքներ ստեղծել կենսունակ, արդյունավետ գործող՝ հանրության առջև հաշվետու և յուրաքանչյուրի համար մատչելի անկախ դատարանների համար՝ ապահովելով

իրական արդարադատություն, այդ թվում՝ ներդնել դատարանների համապարփակ էլեկտրոնային կառավարման համակարգը՝ հնարավոր դարձնելով էլեկտրոնային եղանակով հայցադիմումներ ներկայացնելը:

**Գ.** Արդարադատության ոլորտում կարևոր են նաև օժանդակող ծառայությունները: Մասնավորապես փորձաքննության ոլորտն ունի բարեփոխման կարիք: Այս ոլորտի խնդիրներից են ողջամիտ ժամկետները խախտելը, հակասական եզրակացություններ տրամադրելը: Փորձագետների համար պետք է ստեղծել ինքնակարգավորող կազմակերպություն: Փորձագետներին արտոնագրելու դեպքում, վերջիններիս վարքագիծը կվերահսկվի նաև էթիկայի միասնական կանոններով:

### **1.3. Գործադիր իշխանությունը**

Վերահիմաստավորել նախարարությունների նպատակները և խնդիրները: Պետք է վերականգնել ոլորտային նախարարությունները, մասնավորապես՝ նախարարությունների թվաքանակը պետք է արտահայտվի հետևյալ ոլորտներով՝

- ըստ երկրի ՀՆԱ-ի կառուցվածքի և զարգացման ուղղությունների- գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն, էներգետիկա, հանքարդյունաբերություն, առևտուր, սպասարկման ոլորտ
- ըստ երկրի աշխարհում առավել ճանաչելի դարձնելու ոլորտների - մշակույթ, սպորտ, ՏՏ, տուրիզմ,
- ըստ երկրում առկա խնդիրների լուծման- Կրթություն, առողջապահություն, սոցիալական, տրանսպորտ, կապ;
- ազգային խնդիրների լուծման - կրթություն, սփյուռք;
- Ստրատեգիական - Պաշտպանություն, Արտաքին գործեր:

**Ա. Ոստիկանությունը և ազգային անվտանգության ծառայությունն անհրաժեշտ է դուրս բերել վարչապետի ենթակայությունից:**

### **Բ. Հարկային ոլորտ**

Բ1. Հարկերի մասով, մասնավորապես, պետք է՝

- ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու շեմը բարձրացնել
- փոքր և միջին ձեռնարկատերերի նկատմամբ հարկային

քաղաքականությունը մեղմացնել.

- գույքահարկի և հողի հարկի սահմանաձև նոր հարկերը վերանայել և նվազեցնել.
- գիտության զարգացման նպատակով ներդրումներն ազատել հարկերից:

Բ2. Մասնագիտական ծառայություններ մատուցող անձանց (փաստաբաններ, աուդիտորներ, ճարտարապետներ, բժիշկներ, հաշվապահներ և այլն) հարկային ռեժիմը պետք է առանձնացնել՝ ստեղծելով ոլորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Բ3. Հարկային և մաքսային համակարգերը պետք է գործեն՝ ելնելով արդարության սկզբունքից, պետք է համապատասխան կարողություններ ունենան սովերային տնտեսության կրճատման համար և լինեն միջազգայնորեն մրցունակ՝ նպաստելով բիզնես միջավայրի բարելավմանը:

Բ4. Հարկային և մաքսային գործերով քննչական մարմիններն անհրաժեշտ է դուրս բերել պետական եկամուտների կոմիտեի ենթակայությունից, քանի որ ՊԵԿ-ի հետապնդած նպատակը կաշկանդում է դատավարական նպատակ հետապնդող քննչական մարմին և անուղղակիորեն վերջինիս դարձնում է հարկահավաք գործիք:

**Գ. Մեկ պատուհան** – ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար բավական բարդ է կողմնորոշվել և իմանալ տվյալ պահին թե որոշակի գործառույթները որ պետական կառավարման մարմինն է իրականացնում: Ուստի պետք է հիմնել մեկ պատուհանից իրավաբանական և ֆիզիկական անձանց սպասարկելու կետ, որտեղ կմուտքագրվի ցանկացած դիմում, այնուհետև կբաշխվի ըստ պատկանելիության: Անհրաժեշտ է ներդնել նաև միասնական թույլտվությունների համակարգ:

#### 1.4. Ծառայողների սոցիալական երաշխիքները

Պետական մարմինների համակարգում անհրաժեշտ է՝

- սահմանել պետական կառավարման համակարգի բոլոր ճյուղերում պաշտոնյաների վարձատրության միասնական և արդարացի համակարգ, որը հաշվի կառնի յուրաքանչյուր աշխատողի արտադրողականությունը և աշխատանքի արդյունավետությունը.
- պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով բարելավել սոցիալական երաշխիքների ներդրման, մասնագետների ընտրության, վերապատրաստման և որակավորման գործընթացները.
- վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություններ ու քաշքշուկ՝ բիզնեսի և քաղաքացիների համար: Ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը՝ խաղի կանոնների սահմանման առումով՝ նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսավարողի գործերին:

#### 1.5. Կոռուպցիայի դեմ պայքարը

Հակակոռուպցիոն ուղղվածության կիրարկումը և կոռուպցիայի դեմ պայքարի կարողությունները մեծացնելու նպատակով, ի թիվս այլ միջոցների անհրաժեշտ է՝

- պատճառներն ուսումնասիրել և վերհանել.
- ծառայողների վարձատրության պայմանները բարելավել.
- աշխատանքային հարաբերություններում մեծ դեր տալ բարոյական արժեքներին.
- միջոցներ ձեռնարկել բիզնեսը և քաղաքականությունը սահմանազատելու, պետական կառավարման ապարատը բիզնեսից տարանջատելու ուղղությամբ.
- դպրոցական և բուհական ծրագրերում ներառել կոռուպցիայի վնասակարության վերաբերյալ նյութեր:

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.

### 2.1. Պաշտպանությունը

Պաշտպանության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել՝

- ազգ-բանակ հայեցակարգն իր առավել ընդլայնված տարբերակով.
- զինված ուժերի մարտունակության պահպանում ու բարձրացում, այդ թվում՝ աշխարհագրորի կայացում.
- ռազմական արդյունաբերության և ռազմական գիտության զարգացում.
- զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի, կարգապահության, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բարելավում.
- զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև պատերազմում զոհվածների ընտանիքի անդամների պատշաճ սոցիալական ապահովության և մատչելի ու որակյալ առողջապահական ծառայությունների մատուցում.
- զինված ուժերի՝ ժամանակակից ռազմատեխնիկական միջոցներով համալրում՝ առաջնահերթություն տալով սեփական կամ ազգային ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը և համագործակցելով դաշնակից ու գործընկեր երկրների հետ.
- դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում զինվորական պատրաստվածության դասընթացների կազմակերպում.
- երկրի տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացում, այդ թվում՝ այն երկրներից ապրանքների ներմուծման նկատմամբ սահմանափակումների կիրառում, որոնք կարող են վտանգ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ժողովրդի համար.
- այնպիսի քաղաքականություն, որով քաղաքաշինության բնագավառում բարձրահարկ շենքերի շինարարության թույլտվությունը հնարավոր է ստանալ միայն համապատասխան ապաստարան ստեղծելու պայմանով, ինչպես նաև յուրաքանչյուր գյուղում ստեղծել առնվազն մեկ ապաստարան.
- հայկական աշխարհի պահպանման և զորացման նպատակով սփյուռքի հետ համագործակցության ընդլայնում և համակարգում:

## 2.2. Հոգևոր անվտանգությունը

«Հոգևոր անվտանգություն» հասկացությունն առաջին անգամ ներմուծելու ենք քաղաքական և իրավական դաշտ: «Հոգևոր անվտանգություն» ասելով՝ հասկանում ենք անհատի իրավունքը պաշտպանված լինելու երևույթներից, որոնք քայքայում, բարոյազրկում են հասարակությունը և առհասարակ հակասում են քրիստոնեական ու ազգային մեր հոգևոր րնկալումներին:

Պետությունը պետք է սահմանի հոգևոր անվտանգության հայեցակարգ: Հոգևոր անվտանգության հայեցակարգ մշակելիս և միջոցառումներ ձեռնարկելիս պետությունը համագործակցում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:

## 2.3. Արտաքին հարաբերությունները

Միջազգային ասպարեզում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝

- Արցախի Հանրապետության հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղությամբ, ցույց տալով Ադրբեջանի ագրեսիվ, հայատյաց և անարդար քաղաքականությունը: Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է նպաստի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացմանը (Արցախի ճանաչմանը) և երաշխավորի Արցախի անվտանգությունը:
- Հայաստանի և սփյուռքի կարողություններն ու ջանքերն ուղղել այլ պետությունների և միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը, հետևանքների վերացմանը: Հայաստանի Հանրապետությունը չի կարող հրաժարվել այս պահանջատիրությունից.
- միջոցներ ձեռնարկել Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունները զարգացնելու և կանխատեսելի դարձնելու ուղղությամբ՝ այս նպատակը դիտարկելով գլխավոր առաջնահերթությունների թվում.
- միջոցներ ձեռնարկել Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության զարգացման ուղղությամբ.
- Եվրոպայի անդամ պետությունների (այդ թվում՝ Ֆրանսիայի)

և եվրոպական այլ երկրների հետ բարեկամական հարաբերությունները խորացնելու և գործընկերությունն ընդլայնելու ուղղությամբ.

- Իրանի և Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական և այլ աշխարհաքաղաքական ազդեցություններից զերծ հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ.
- Չինաստանի հետ առանձնահատուկ բարեկամական հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ.
- Հնդկաստանի և Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցությունը զարգացնելու ու խորացնելու ուղղությամբ.
- ընդլայնելու փոխգործակցությունը Մերձավոր Արևելքի գործընկեր երկրների հետ, զարգացնելու համագործակցությունն ամերիկյան, ասիական, աֆրիկյան, խաղաղօվկիանոսյան, ինչպես նաև այլ պետությունների հետ.

Միջազգային կառույցների հետ համագործակցությունը կարող է սահմանափակվել, եթե այն վտանգ է ներկայացնում հայ ժողովրդի ազգային ինքնությանը:

## **2.4. Հայկական Սփյուռքը**

Կուսակցությունը կարևորում է Հայաստանի՝ որպես համայն հայության հայրենիքի և Սփյուռքի զարգացումը, հայության բոլոր հատվածների միասնականության ապահովումը՝ այն նպատակաուղղելով հայոց պետության հզորացմանն ու ամրացմանը, հայապահպանությանը և հայ ինքնության ամրապնդմանը:

Օգտագործելով երկքաղաքացիության ինստիտուտը և հայրենադարձության խթանման հայեցակարգը՝ պետությունը պետք է սփյուռքահայերին ներգրավի պետական կառավարման համակարգում, ինչպես նաև ստեղծի Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի առավելագույնս ներգրավման և ներդրումների խրախուսման նպատակով միջավայր, այդ թվում՝ ստեղծելով սփյուռքահայերի ներդրումների պաշտպանության կոմիտե: Կոմիտեում ներգրավված պետք է լինեն առնվազն արդարադատության, հարկային, մաքսային, ոստիկանության, էկոնոմիկայի ոլորտներից ներկայացուցիչներ:



Երկպալատ ազգային ժողով ստեղծելու դեպքում, վերին պալատում պետք է ներգրավել Սփյուռքի ներկայացուցիչներին:

Սփյուռքում հայապահպանությանն աջակցելու, երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցման, կիրառման, կրթական այլ ծրագրերի ընդլայնման, ինպես նաև բարոյակերտ արժեհամակարգի պահպանման և վերարտադրության նպատակով պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի:

Պետությունը պետք է ապահովի վիրահայության, այդ թվում՝ Զավախքի հայկական համայնքների հայապահպանությանն ուղղված, ինչպես նաև մայրենի լեզվի, մշակույթի պահպանման աջակցության ծրագրերի իրականացումը:

Պետությունը պետք է ակտիվորեն համագործակցի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջոցով սփյուռքի թեմերի հետ՝ հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանման և նոր սերունդներին հայեցի դաստիարակություն տալու նպատակով:

Պետությունը պետք է նպաստի միջազգային իրավունքի սկզբունքների շրջանակում այլ պետություններում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության պահպանությանը:

Անհրաժեշտ է Սփյուռքի նախարարության վերաբացումը: Սփյուռքի նախարարության ստեղծումը ավելի քան յոթ միլիոնանոց Սփյուռքում բնակվող երկրի համար կենսական անհրաժեշտություն է: Նախարարության առջև պիտի դրվի հետևյալ ռազմավարական խնդիրները՝

- նպաստել հայապահպանությանը՝ ազգային ինքնության պահպանմանը, համագործակցելով Սփյուռքի կազմակերպությունների և հոգևոր կառույցների հետ,
- նպաստել հայկական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը՝ Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման նպատակով,
- մշակել և իրականացնել հայրենադարձությունը խթանող ծրագրեր՝ վերապահելով համակարգելու պետական, կառավարական և ոչ

կառավարական կազմակերպությունների գործունեությունը Սփյուռքի հետ տարվող աշխատանքներում.

- Հայաստանից առցանց կազմակերպել կրթական ծրագրեր Սփյուռքի երեխաների համար՝ երեկոյան ժամերին:

### **3. ԱՐԴԱՐ ԵՎ ԱՌՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.**

#### **3.1. Սոցիալական քաղաքականությունը**

Սոցիալական քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել՝

- բնակչության եկամուտների աճի ապահովում՝ բաշխման առավել արդար մեխանիզմների կիրառմամբ, աշխատողի արժանապատիվ աշխատանքի իրավունքի, աշխատանքի արտադրողականության և արդյունավետության աճին համապատասխանող իրական աշխատավարձի մակարդակի հետևողական բարձրացման ապահովում.
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության խնդիրների լուծման միջոցառումներ.
- սոցիալապես անապահով անձանց (ընտանիքների) սոցիալական կացարանի (բնակարանի) տրամադրման ծրագրեր.
- բազմազավակ ընտանիքներին սոցիալական կացարանի (բնակարանի) տրամադրման ծրագրեր.
- զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված շարունակական աշխատանքներ.
- հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային ծառայությունների մատչելիության ապահովում.
- երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացմանը, երեխաների սոցիալական պաշտպանությանը, երեխաների խնամքն անմիջականորեն ընտանիքում իրականացնելու առաջնահերթությանն ուղղված քաղաքականություն.
- մայրական կապիտալի համակարգի ներդրման կամ այլ միջոցներով ծնելիության խթանումը:

### 3.2. Առողջապահությունը

Առաջարկվում է ներդնել պարտադիր առողջապահական ապահովագրական համակարգ, որով հնարավոր կլինի իրականացնել հիվանդությունների վաղ շրջանում ախտորոշում և կանխարգելում, կբարձրանա կյանքի միջին տևողությունը, առողջապահական ծառայությունները կդառնան լիարժեք հասանելի ազգաբնակչության բոլոր շերտերի համար, կզարգանան ծառայությունների սպասարկման մակարդակը: **Ընդ որում երեխաների և կենսաթոշակառուների մասով ապահովագրական ծախսերը պետք է իրականացվեն պետության կողմից:**

Սպորտի մասսայականացման, առողջ և անվտանգ սննդի երաշխավորման, ծխելու դեմ պայքարի հարցերը մշտապես պետք է լինեն պետության օրակարգում:

Անհրաժեշտ է նաև՝

- ապահովել ազգաբնակչության առողջ սննդի սպառումը՝ զերծ վտանգավոր ԳՁՕ-ից և սննդային հավելումներից.
- խթանել տեղական դեղագործության և առողջապահական արտադրանքի զարգացմանը.
- ներդնել էլեկտրոնային առողջապահական համակարգ:

### Պատվաստումները չեն կարող լինել պարտադիր:

Ազգաբնակչության շրջանում իրականացվող պատվաստումներն ու այլ կանխարգելիչ միջացառումները սահմանելիս պետք է ապահովել հանրային լսումներ ներգրավելով հասարակության լայն շերտերը:

### 3.3. Կրթությունը և գիտությունը

Պետությունը պետք է ապահովի գիտելիքի հաղորդումը և գիտելիքի հետ աշխատելու ունակությունը: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը պետք է նպատակաուղղված լինի հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Անհրաժեշտ է իրականացնել կրթական համակարգի կառավարման մոդելի արմատական փոփոխություն:

Անհրաժեշտ է ստեղծել Կրթության նախարարությանն ուղղորդող մարմին՝ **ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**: Վերջինս կուղղորդի և կօժանդակի հանրակրթության խնդիրները լուծելուն, կմասնակցի արդյունավետ կրթական քաղաքականության մշակմանը:

Ազգային արժեքների խորհրդի անդամներին կարելի է ընտրել հասարակության հնարավորինս ընդգրկուն մասի կողմից՝ հստակ սահմանված չափանիշներով, նրանց առաջադրում են կրթության և մշակույթի բոլոր հաստատությունները, ինչպես նաև Հայաստան-յայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից նշանակված ներկայացուցիչներից: Ազգային արժեքների խորհրդի ղեկավարը ի պաշտոնն փոխվարչապետն է:

Կրթության և գիտության բնագավառում՝

- անհաժեշտ է ապահովել բուհերի ինքնակառավարումը, այդ թվում՝ պետական մասնակցությամբ բուհերի.
- կրթությունը հասանելի դարձնելու նպատակով անվճար կրթություն սպասարկելու սոցիալապես անապահով խավերի համար (ներառյալ բարձրագույն կրթությունը).
- բարձրացնել ուսուցիչների աշխատավարձեր և ապահովել սոցիալական երաշխիքներով.
- բարելավել հանրակրթական առարկայական ծրագրերի և դասագրքերի բովանդակային որակը.
- անհրաժեշտ է Հայ եկեղեցու պատմություն առարկան դասավանդել դպրոցում.
- անհրաժեշտ է դպրոցում ներդնել մարտարվեստի կամ ուժային այլ մարզաձևերի դասընթացներ.
- անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել գիտնականների՝ վերջին տարիներին գրանցած հաջողությունների հետագա զարգացմանը.
- ներդնել նոր մեխանիզմներ գիտնականների սոցիալական պաշտպանվածության բարձրացման գործում.
- ընդլայնել երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի

ծավալները.

- աջակցել գիտական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը.
- զարգացնել գիտությունների ազգային ակադեմիան:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում, անկախ կազմակերպատիրավական ձևից սերտիֆիկացնելու միջոցով գումարները տրամադրել սովորողների ընտանիքներին՝ իրավունք վերապահելով տրված սերտիֆիկատն օգտագործել ցանկացած լիցենզավորված ուսումնական հաստատությունում: Սա կբերի առողջ մրցակցության, ընտանիքները դպրոցների հետ հարաբերություններում հանդես կգան, որպես պահանջատեր:

### **3.4. Շրջակա միջավայրի պահպանությունը**

Բնապահպանական և տնտեսական օգուտների ու վնասների հետազոտման միջոցով հավասարակշռված բնապահպանական միջավայրի ապահովումը, մարդու առողջության պահպանումը և կյանքի որակի բարձրացումը բնապահպանության ոլորտում պետության քաղաքականության առանցքն են:

Այս նպատակով անհրաժեշտ է՝

- ներդնել շրջակա միջավայրի էկոհամակարգային կառավարում,
- ապահովել ջրային ռեսուրսների կայուն կառավարում (գետավազանային կայուն կառավարում),
- արդյունավետ իրականացնել բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառների կառավարումը և նրանց մակերեսների ավելացումը,
- ուժեղացնել պետական վերահսկողությունը շրջակա միջավայրի պահպանման բոլոր ոլորտներում,
- ապահովել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության ուղղված միջոցառումները.
- հնարավորինս զերծ մնալ բաց հանքերի շահագործումից, այն իրականացնել բացառիկ դեպքերում զերծ մնալով բնակչության առողջության վտանգից:

### 3.5. Մշակույթը

Մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի ստեղծագործական կարողությունների խթանմանը, նրա ձևավորմանն ու հանրայնացմանը, ազգային հոգևոր, բարոյական, մշակութային արժեհամակարգի վրա հիմնված, քաղաքացիական բարձր գիտակցությամբ ու հայրենասիրությամբ օժտված հասարակության զարգացման գործընթացների ապահովմանը:

Մշակույթի հարցերով ուղղորդումը պետք է իրականացնի Ազգային արժեքների խորհուրդը (Տես 3.3 կետը):

Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- ստեղծել նպաստավոր պայմաններ հայ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ավանդույթների վերարտադրման համար,
- շարունակել արտերկրում հայկական մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման գործընթացը,
- պետական պատվերի տեղադրումով նպաստել երաժշտության, ֆիլմերի, թատերական ներկայացումների, հեռուստահաղորդումների, գրքերի միջոցով ազգային և համամարդկային արժեքների տարածմանը,
- ծրագրել ազգային երգ ու պարի դասավանդում դպրոցում, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակույթի դասընթացների ներմուծում կրթական ծրագրերում,
- լայնորեն տարածել շարժական մշակույթի կիրառումը, որը կապահովի մայրաքաղաքային մշակույթի մուտքը մարզեր (գրադարան, թանգարան, գրախանութ և այլն),
- ապահովել պետության ակտիվ համագործակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ՝ հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանման, մատաղ սերնդին անցանկալի ազդեցություններից զերծ պահելու և հայեցի դաստիարակություն տալու նպատակով,
- խթանել ստեղծագործական արդյունաբերությունը (հուշանվերների պատրաստում, ազգային խոհանոցի տարածում, կիրառական

արվեստի ճյուղերի զարգացում և տարածում)։

- յուրաքանչյուր համայնքում բացել առնվազն մեկ մշակութային կենտրոն (երգի, պարի, կիրառական արվեստների խմբակներ)։

### **3.6. Ժողովրդագրությունը**

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում բնակչության ծերացման միտումները մեղմելը, ապա նաև՝ կանխելը, առողջ սերնդի վերարտադրությունը խթանելը, երկրից երիտասարդների արտահոսքը կանխարգելելը, հայրենիք վերադառնալուն պատրաստ երիտասարդներին սատարելը։

Այս առումով անհրաժեշտ է՝

- իրականացնել ծնունդների սոցիալական խրախուսում՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով։
- ուսումնասիրել և վերլուծել ամուսնալուծության պատճառները և միջոցներ ձեռնարկել այդ պատճառները վերացնելու ուղղությամբ։
- աջակցել երիտասարդ ընտանիքներին։
- օրենքով արգելել աբորտները (հղիության արհեստական ընդհատումը), թույլատրելով միայն բացառիկ դեպքերում՝ մոր կյանքին վտանգ սպառնալու։

## **4. ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

### **4.1. Արդյունաբերությունը**

Տնտեսության մրցունակության բարձրացման, կառուցվածքի որակական վերափոխման ձևավորմանն է ուղղվելու արտահանման վրա հիմնված պետության արդյունաբերական քաղաքականությունը։

Պետությունը պետք է բաժնետիրական մասնակցություն ունենա խոշոր արդյունաբերական ընկերություններում և տնտեսության տարբեր ճյուղերում, դրանով առավելագույնս աջակցելով, սակայն երբևիցե չխոչընդոտելով նրանց զարգացմանը։

Հայաստանում մշտապես պետք է գերակայի մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, առավելագույնս նվազեցվի բյուրոկրատական խոչընդոտները բիզնեսի համար:

Պետությունը պետք է տնտեսության պետական և մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծի: Տնտեսական համակարգը պետք է հիմնվի մրցակցության վրա:

#### **4.2. Գյուղատնտեսությունը և գյուղը**

Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը պետության օրակարգային կարևոր հարց է: Պետությունը բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար պետք է ստեղծի կյանքի համար հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի լիարժեք ինքնադրսևորման համար, այն գիտակցումով, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել բարձրալեռնային և սահմանամերձ շրջաններին:

Այս առումով անհրաժեշտ է՝

- իրականացնել միջոցառումներ՝ ուղղված գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը,
- իրականացնել ուսումնասիրություն և դրա արդյունքներով պատվիրել հողամասի սեփականատերերին տվյալ տարածաշրջանում որոշակի տեսակի գյուղմթերքի արտադրություն՝ ապահովելով սուբսիդավորումը կամ մատչելի վարկավորումը,
- ապահովել պարենային անվտանգության նկատառումներից ելնելով գյուղատնտեսական ապրանքների երաշխավորված գնումը:

Գյուղում կյանքի որակի բարձրացման նպատակով պետության ջանքերը պետք է ուղղվեն՝

- գյուղական աղքատության կրճատմանը.
- մատուցվող պետական ծառայությունների որակի կտրուկ բարձրացմանը.



- գյուղական համայնքների կարողությունների զարգացմանը՝ հնարավորինս հասանելի դարձնելով խմելու ջուրը, գազը, էլեկտրաէներգիան, հեռախոսակապը, համացանցը, բժշկական ծառայությունները.
- գյուղական ճանապարհների ու տրանսպորտային ժամանակակից ցանցերի բարելավմանը:

### **Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվող գյուղմթերքի կայուն իրացմանն ուղղված աջակցություն.**

Պետությունն այսօր չի կարգավորում երկրում արտադրվող գյուղմթերքի ծավալներն, ինչն ամեն տարի հանգեցնում է տարբեր մշակաբույսերի կամ ավելցուկի կամ դեֆիցիտի: Այն իր հերթին անկայուն է դարձնում շուկան և առաջացնում գնային մեծ տատանումներ: Որպես հետևանք գյուղմթերք արտադրողներն ունենում են բազմակի կորուստներ, իսկ ոլորտը դառնում է ոչ գրավիչ:

- Անհրաժեշտ է վերականգնել գյուղատնտեսության նախարարությունը,
- Պետությունը պետք է մասնակցի երկրում արտադրվող գյուղմթերքի ծավալի կարգավորմանը, հաշվի առնելով արտադրման ներուժը և սպառումը (օրինակ՝ մարզային, զոնային մասնագիտացում; կվոտավորում),
- Պետությունը պետք է օժանդակություն ցուցաբերի արտադրված գյուղմթերքի մթերմանը(իրացմանը)՝ կարգավորելով արտադրված գյուղմթերքի ծավալի, ներքին սպառման, վերամշակող ոլորտի ներուժի և արտահանման հնարավորությունների համաչափությունը:

### **Գյուղատնտեսության և վերամշակող ոլորտի սուբսիդավորում.**

Սուբսիդավորումը լինելով կարևոր գործիքներից մեկը նպաստում է արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը, ծավալների ավելացմանը, մշակաբույսերի տեսակի կամ արտադրանքի կվոտավորմանը և շուկայուն մրցունակության բարձրացմանը: Սուբսիդավորման քաղականությունը կարող է ունենալ որոշիչ դերակատարություն գյուղատնտեսության և վերամշակող ոլորտներում:

Պետք է մշակել և կիրառել սուբսիդավորման արդյունավետ, ճկուն համակարգ: Էտորապես չմտածված համակարգի ներդնումը կարող է ունենալ քայքայիչ հետևանքներ գյուղատնտեսության համար:

Արդյունքին հասնելու համար սուբսիդավորումը պետք է իրականացվի արտադրական շղթայի ճիշտ որոշված փուլերում, այլ պարագայում սուբսիդավորումը չի լինի ռելևանտ մեր նպատակներին և գումարները կփոշիացվեն (օրինակ՝ X մշակաբույսի ծավալների ավելացման համար պետք է սուբսիդավորել ստացված բերքը, այլ ոչ մշակված հողատարածքը):

Ոռոգման համակարգերը, ինովացիոն բերքահավաք մեքենաները, նոր տեխնոլոգիաները և ծրագրային ապահովումները պետք է լինեն պետության կողմից սուբսիդավորման ցանկում:

### **4.3. Տարածքային համաչափ զարգացումը**

Տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացի համար:

Այս ոլորտում անհրաժեշտ է՝

- իրականացնել Երևանի բեռնաթափման համալիր ծրագիրը՝ պետական, կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառույթներ իրականացնելով հանրապետության մյուս տարածքներում, բարձրացնելով այլ քաղաքների դերը հանրային գործընթացներում,
- մշակել տարածքային համաչափ զարգացման նոր գործիքակազմ,
- սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար իրականացնել հատուկ օժանդակության ծրագրեր, այդ թվում՝ հարկային արտոնություններ տրամադրել:

### **4.4. Ենթակառուցվածքները**

Հայաստանի մրցունակության բարձրացումը պահանջում է ենթակառուցվածքներում ներդրումների շարունակական իրականացում:

#### 4.4.1. Էներգետիկան

Էներգետիկայի ոլորտում պետության իրականացրած քաղաքականությունը պետք է միտված լինի հետևյալ միջոցառումների իրականացմանը՝

- երկրի էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացում:  
**Որպես գերակայություն և ազգային անվտանգության երաշխավոր պետք է սահմանվի միջուկային (ատոմային) էներգետիկան,**
- էներգախնայողության միջոցառումների ներդրմանը նպաստող քաղաքականության վարում,
- Իրան-Հայաստան և Հայաստան-Վրաստան անհրաժեշտ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցում, որը Հայաստանի Հանրապետությունից հարևան երկրներով էլեկտրաէներգիայի տարանցիկ մատակարարման և արտահանման հնարավորություն կստեղծի:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է շարունակի Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, և կատարի աշխատանքներ գործող էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղությամբ:

#### 4.4.2. Ջրային ռեսուրսների կայուն կառավարում

Հայաստանում առկա 444 հազ. հա վարելահողերից ոռոգվող են համարվում 117 հազ. հա, կամ ընդամենը 26%, ինչը չի կարող համարվել բավարար ցուցանիշ: Սա կախված է և հողի մշակման և ջրային պաշարների անարդյունավետ օգտագործման հետ: ՀՀ տարածքում տարեկան գեներացվում է շուրջ 7-8 մլրդ. մ3 մակերեսային ջրեր, որից կարողանում ենք օգտագործել միջինում 22-25%, մնացած մասը հոսում է հանրապետությունից դուրս:

Ջրային ռեսուրսներ կառավարման համար անհրաժեշտ է՝

- ամբողջապես մշակել ջրավազանային կառավարման պլանները և հետևողականորեն առաջնորդվել նրանցով,

- կառուցել փոքր և միջին ջրամբարներ,
- կահավորել ոռոգման ենտակառուցվածքերը,
- լայնորեն ներդնել ջրի խնայողական համակարգերը,
- ճկուն սակագնային քաղաքականության միջոցով մատչելի դարձնել ջրի օգտագործումը;
- ներդնել ջրի շրջանառու համակարգ և ապահովել նրա երկրորդային կամ բազմակի օգտագործում:

Ջրամատակարարման բնագավառում պետությունը պետք է ապահովի բնակչությանը կայուն, հուսալի և անվտանգ մատակարարումը, ինչպես նաև պետք է իրականացնի ջրի որակի ապահովման, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովման քաղաքականությունը:

#### **4.4.3. Տրանսպորտային ենթակառուցվածքները**

Տրանսպորտի կայուն և արդյունավետ զարգացումը դիտարկվում է որպես անհրաժեշտ պայման՝ երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսապայմանների բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման և մրցունակության համար:

Առաջնահերթությունը պետք է տրվի ճանապարհային ցանցի առավել ինտենսիվ, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող հատվածներում իրականացվող ներդրումներին:

Անհրաժեշտ է՝

- շարունակել «Հյուսիս-հարավ» առաջին արագընթաց ճանապարհի կառուցումը.
- ավելացնել Երևանի ավտոճանապարհների և հանգույցների շինարարության ծավալները, թեթևացնելով Երևան քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը: Այլ քաղաքներում ևս պետք է ավելացնել ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի իրականացման տեմպը.
- ավելացնել միջպետական, հանրապետական և տեղական

նշանակության (այդ թվում՝ գյուղական համայնքները սպասարկող) ավտոճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների պահպանման ու հիմնանորոգման նպատակով հատկացվող պետական ներդրումների ծավալները.

- նորացնել և արդիականացնել հասարակական տրանսպորտը.
- ձգտել կառուցել Հայաստանի հյուսիսից հարավ արագընթաց երկաթգիծ.
- ձգտել ազգային ավիափոխադրողի ձևավորմանը և նպաստել առաջատար ավիաընկերությունների ծառայությունների հասանելիությանը Հայաստանում:

#### **4.4.4. Տեղեկատվական տեխնոլոգիաները**

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի պետական քաղաքականության նպատակն է Հայաստանը դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մեծ հավելյալ արժեք ստեղծող նորարարական, հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ ու ծառայություններ առաջարկող և արտահանող երկիր, առնվազն կրկնապատկել ոլորտում աշխատողների թիվը, արտադրողականությունը և արտահանման ծավալները:

Ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը պետք է ուղղվի՝

- պետություն - մասնավոր հատված համագործակցության հենքով համապատասխան նորարարական էկոհամակարգի՝ հետազոտական, կրթական կենտրոնների, տեխնոպարկերի, լաբորատորիաների, աքսելերատորների և այլ ենթակառուցվածքային միավորների ձևավորմանը.
- տնտեսության բոլոր ոլորտներում, ինչպես նաև անվտանգության և բանակաշինության բնագավառում SS-ի նորարարական լուծումների ներդրման և օգտագործման մակարդակի բարձրացմանը, էլեկտրոնային առևտրի ենթակառուցվածքների ձևավորմանը:

#### **4.4.5. Հեռահաղորդակցությունը**

Հեռահաղորդակցության ոլորտում պետությունը նպաստելու է ծառայությունների աշխարհագրության ընդլայնմանն ու նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանությանը և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովմանը:

Հեռահաղորդակցության ու փոստային կապի ոլորտներում որակյալ ծառայություններ մատուցելու համար պետք է ներդրվեն միջազգային լավագույն չափորոշիչներ:

Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի սեփական արբանյակի թողարկման և այն Հայաստանին հատկացված գեոստացիոնար ուղեծրում տեղակայելու ուղղությամբ: Պետությունը պետք է ապահովի հեռահաղորդակցության անվտանգությունը:

#### **4.5. Բանկային համակարգ**

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի փաստացի և թաքնված տոկոսադրույքների հստակեցում.

Ներկայումս ՀՀ բանկերի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և սպասարկման համար գանձվող գումարները վարկառուների մոտ խնդիրներ են առաջացնում, քանի որ տվյալ պարագայում էականորեն տարբերվում է նախապես հայտարարվող տոկոսադրույքից:

Ուստի անհրաժեշտ է այդ թաքնված թվերը օրենքի ուժով ներառել իրական տոկոսադրույքի և պոտենցիալ վարկառուներին թյուրիմացության մեջ չգցել:

Փոքր և միջին վարկերով պարտազանցների ցուցակում հայտնված անձանց նկատմամբ պետք է կիրառել համաներում՝ ցուցակներից հանելու մասով:

## 5. ԱՋԱՏ, ԱՌՈՂՋ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ և ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԻՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.

Ժամանակակից աշխարհում կարևորագույն խնդիրը ինքնության հարցն է: «Ո՛վ եմ ես», - այսպես է հնչում ժամանակակից մտածողին մտահոգող խնդիրը: Քաղաքական ոլորտում կենսունակ լինելու հավակնություն ունեցող ցանկացած ծրագիր կամ նախագիծ չի կարող անպատասխան թողնել ինքնության հարցադրումը:

Այս առումով է, որ կուսակցությունը կարևորում է հանրային համերաշխության մթնոլորտի վերստեղծումը, հասարակության ու պետության կյանքում ազգային արժեքների կարևորումն ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հստակ դերակատարության սահմանումը: Հայ եկեղեցին, լինելով Քրիստոսի Ավետարանի վկայողը, եղել է նաև ազգային արժեքների փոխանցող:

Դարերի ընթացքում ազգային և քրիստոնեական արժեքները միաձուլվել են՝ պահելով և տարբերությունը, և նմանությունը: Մեկը հավատքն առ Աստուծոց է սկսում, իսկ մյուսը՝ նվիրվածություն սեփական ժողովրդին: Ամեն ազգային արժեք բարոյականության է տանում, իսկ ամեն քրիստոնեական արժեք Աստծուն է տանում, որտեղից վայրէջք դեպի մարդ: Հայ եկեղեցին սրբորեն պահպանել է արժեքային համակարգում ներառված երեք կարևորագույն հատկանիշները՝ հավատը, հայրենիքը և լեզուն:

Կուսակցության ջանքերն ուղղված են լինելու ազգային ինքնության ճգնաժամի հաղթահարմանը, հայ ժողովրդի հավաքական հիշողության ու արժեհամակարգի ամրացմանը, ազգային միասնական ձգտումների սահմանմանը և հասարակական-քաղաքական օրակարգ դարձնելուն:

Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ Հայաստանն ու հայությունը մեկուսի կղզիներ չեն: Որպես պետություն, Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է մի շարք կարևոր ինտեգրացիոն գործընթացներում, որոնք ներառում են անվտանգության ու տնտեսության ոլորտները, վերաբերում են ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, միգրացիային, շրջակա միջավայրի պահպանությանը ու նմանօրինակ այլ հարցերի:

Այս առումով էլ, մեր ինքնության սահմանման ու պաշտպանության, Սփյուռքի, հայապահպանության հարցերը հարստանում են նոր բովանդակությամբ ու անելիքներով:

Պահպանողականության, կուսակցության կողմից ներկայացվող դրույթները բխում են բացառապես համախոհների՝ ազգային ինքնության պահպանության հրամայականի ընկալումից ու վերաբերում են դրան:

Երկրի ու պետության առաջ ծառայած մարտահրավերների հաղթահարման համար միակ հնարավորությունը ներկայում ազգային ներուժի առավելագույն համակենտրոնացումն է: Բարձրաձայնված նպատակներին հնարավոր չի լինի հասնել, եթե հասարակությունում չկարևորվի ավանդական արժեքների դերը և նշանակությունը:

Պետությունը պետք է պաշտպանի ընտանիքը և մանկությունը: Ընտանիքի ավանդական անդամների՝ տղամարդու և կնոջ միասնության խեղաթյուրման փորձը վտանգում է ընտանիք հասկացությունը: Այդ առումով, Կուսակցության համար մերժելի է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (ստամբուլյան կոնվենցիան):

«Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան նույնպես մտահոգության տեղիք է տալիս, երեխաներին սեռական կրթություն տրամադրելու մասով: Մանկությունն ավարտվում է այն պահից, երբ երեխան սեռական ճանաչողություն է ձեռք բերում:

**Կուսակցությունը խիստ դեմ է մանկությունից մանկահասակ տարիքի երեխաներին այդ եղանակով զրկելու ցանկացած դրսևորմանը:**

Ընտանիքի, մանկության, հայոց լեզվի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ազգային այլ արժեքների պաշտպանությունը գտնվում է պետության առաջնահերթություններում:



Պետությունը պետք է սահմանի հայ մարդու բացարձակ կերպարը և կրթական, մշակութային միջոցառումներով ազգաբնակչությանը տանում է դեպի այդ կատարելատիպը: Խոսքը գնում է կատարելության բացարձակության մասին, ինչպիսին պետք է լինի հայ մարդը:

## ՀԱՅՐ ՊԵՏՔ Է՝

- տիրապետի խորապես հայերենին (ունենա գիտելիք գրաբարի և բարբառների շուրջ),
- ճանաչի այն երկիրը, որտեղ ապրում է,
- իմանա սեփական պատմությունը արարչագործությունից ի վեր,
- քրիստոնեական և ազգային ավանդույթների կրողը լինի,
- լինի նորարար, աշխատասեր և ուսումնաստենչ,
- ունենա հմտություններ ռազմարվեստում,
- ծանոթ լինի քրիստոնեական դավանաբանությանը,
- ապրի և ստեղծագործի Հայաստանում,
- ունենա հստակ պատկերացում աշխարհաքաղաքական իրավիճակի մասին և բավարար հմտություններ ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու համար,
- ունենա կամք և դիմադրողականություն՝ ապազգային երևույթները մերժելու համար,
- և ամենակարևորը՝ ունենա սերն առ հայրենիք:



**Պետությունը ստանձնելով հասարակությանը կրթելու պատասխանատու գործը՝ պետք է առաջնորդվի բացարձակ հայ դաստիարակելու տրամաբանությամբ:**

ԶՈՐԴԱԲՅԱՆ  
ԱՐԱ

ՆԱԼՉԱՋՅԱՆ  
ԿԱՐԻՆԵ

ՉԱԽԱԼՅԱՆ  
ՎԱՀԱՂՆ



## Չարթնի՛ր

հանուն Հայաստանի, Արցախի, Տավախքի,  
Սիյունքի և **Մեր տեսակի** հարատևության

#ԶԱՐԹՈՆՔ #ZARTONQ     

 Նաիրի Զարյան 24  (374) 10 440 333  info@zartonq.am  zartonq.am